https://doi.org/10.53587/25792865-2025.14-93

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՆՐԱՅԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ, ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Մելքոնյան Թ.Վ., Մոսիկյան Ա.Թ.

Փորձաքննությունների ազգային բյուրո,
Երևան, Հայաստան

Հայտնի է, որ դատափորձագիտության բնագավառում դատական փորձագետի նկատմամբ վստահությունը պայմանավորված է տրված փորձագիտական եզրակացությունների հիմնավորվածությամբ, մասնագիտական բարձր որակներով, հատուկ գիտելիքների ճիշտ և նպատակային կիրառման կարողություններով, անկախությամբ և անկողմնակալությամբ: Ոչ պակաս կարևոր է նաև փորձագետի գործունեության թափանցիկության և հանրային հաղորդակցության արդյունավետ մեխանիզմների ապահովումը, որոնք անհրաժեշտ են հաշվետվողականության սկզբունքի ամրապնդման, ապացուցողական տվյալների հիմնավորվածության և վստահության բարձրացման համար:

Հոդվածում դիտարկվում է դատափորձագիտության բնագավառում տեղեկատվության և թափանցիկության ապահովման անհրաժեշտությունը՝ որպես տվյալ բնագավառի և դատական փորձագետի նկատմամբ հանրային վստահության կարևոր տարր: Միևնույն ժամանակ, վերլուծվում է դատափորձագիտական դաշտում տեղեկատվության գաղտնիության պահպանման պարտադիր պահանջը՝ տեսագծելով այն նուրբ սահմանը, որտեղ լուսաբանումը չպետք է վնասի վարույթի քննությանը: Հոդվածում առաջարկվում են տեղեկատվության ապահովման թույլատրելի մեխանիզմներ՝ ապահովելով փորձագետների, իրավաբանական համայնքի, ինչպես նաև ոլորտով հետաքրքրված շահագրգիռ անձանց միջև արդյունավետ հաղորդակցությունը:

Բանալի բառեր. *դատափորձագիտության բնագավառ, տեղեկատվության ազատություն, թափանցիկություն, հաշվետվողականություն, հանրային վստահություն, գաղտնիություն, ապացույցների գնահատում, հաղորդակցություն, բաց կառավարման տվյալներ, CSI էֆեկտ:*

Տեղեկատվության ազատության իրավունքը համարվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված հիմնարար իրավունքներից մեկը, որի պատշաճ իրացումն էապես նպաստում է տեղեկատվություն

Թղթակցական հասցեն՝ Մելքոնյան Թագուհի Վաչագանի, տեղեկատվական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, ՀՀ, ք. Երևան, , Իսակովի 24, e-mail: taguhimelqonian@gmail.com

տնօրինողի նկատմամբ վստահության աճին և հաշվետվողականության սկզբունքի ամրապնդմանը: Տեղեկատվության ազատության կարևորագույն տարրերից է պրոակտիվ (սեփական նախաձեռնությամբ) հրապարակման սկզբունքը. այն է՝ նորությունների, պաշտոնական հաղորդագրությունների կամ հարցազրույցների միջոցով հանրությանը պարբերաբար իրազեկել տվյալ հաստատության գործունեության, ընթացիկ ծրագրերի, վիճակագրական ցուցնիշների, ինչպես նաև ոլորտում առկա հիմնախնդիրների և դրանց լուծման արդյունավետ ուղիների մասին:

Միջազգային հեղինակավոր «Բաց կառավարման գործընկերություն» (Open Government Partnership) նախաձեռնությունը, որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 2011 թվականին, դեռևս 10 տարի առաջ Մեքսիկայում՝ OGP-ի միջազգային գագաթնաժողովի շրջանակներում, տարբեր երկրների կառավարությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և միջազգային փորձագետների համատեղ աշխատանքի արդյունքում մշակել և հրապարակել է Բաց տվյալների Կանոնադրություն՝ Խարտիան (Open Data Charter), որը նախատեսված է ուղղորդելու կառավարություններին և Խարտիայի սկզբունքները կամովին կիրառող կազմակերպություններին բաց տվյալների հրապարակման և օգտագործման գործընթացում: Այն ստեղծվել է՝ ապահովելու համատեղ մոտեցում, որպեսզի գերատեսչությունների կողմից հրապարակվող տվյալները լինեն ոչ միայն հասանելի, այլև օգտակար, որակյալ և կիրառելի: Կանոնադրության վեց հիմնական սկզբունքները, որոնք պարտավորվում են կիրառել ստորագրող կառավարությունները և կազմակերպությունները հետևյալն են.

1. Բաց լինել լռելյայն. տվյալները պետք է հրապարակվեն, եթե առկա չեն իրավական սահմանափակումներ (անձնական տվյալների ոչ նպատակային օգտագործում, նախաքննական գաղտնիք և այլն):
2. Ժամանակին և համապարփակ. տվյալները պետք է լինեն ամբողջական, ճշգրիտ և հրապարակվեն հենց այն ժամանակ, երբ դրանք հասանելի են դառնում:
3. Մատչելի և կիրառելի. տվյալները պետք է լինեն հեշտ հասանելի:
4. Համեմատելի և համատեղելի. տվյալները պետք է լինեն ստանդարտացված՝ հնարավորություն տալով դրանք համեմատել այլ տվյալների հետ:
5. Բարելավել կառավարումը. տվյալների բաց լինելը պետք է նպաստի կառավարման որակի բարձրացմանը և թափանցիկությանը:
6. Համագործակցության խթանում. շահագրգիռ կողմերի հետ համագործակցություն՝ տվյալների կիրառման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով [1]:

Հիշյալ սկզբունքների կամավոր կիրառումը կարևոր նշանակություն ունի կազմակերպությունների (հատկապես պետական կամ հանրային ծառայություններ մատուցող մարմինների) համար, քանի որ այն գերազանցում է օրենքով սահմանված տեղեկատվության ապահովման նվազագույն պարտականությունների շրջանակը և ուղղակիորեն ազդում կազմակերպության արդյունավետության և «հանրային կապիտալի»

վրա՝ դրանով իսկ մեծացնելով քաղաքացիների և գործընկերների վստահությունը: [2]

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվության ազատության ոլորտը կարգավորվում է 2003թ. սեպտեմբերի 23-ին ընդունված «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որը երկու անգամ ենթարկվել է պաշտոնական ինկորպորացիայի (2022թ. և 2023թ.): Նշված օրենքի համաձայն՝ տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներն են՝

1. տեղեկությունները գրանցելու, դասակարգելու և պահպանելու միասնական կարգի սահմանումը,
2. տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատության պաշտպանությունը,
3. տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը.
4. հրապարակայնությունը:

Հարկ է նշել, որ տեղեկատվության պատշաճ ապահովումն ունի ոչ միայն իրազեկման, այլ նաև կողմնորոշիչ նպատակ: Թափանցիկությունը, որն ապահովվում է պատշաճ տեղեկատվությամբ, չի ավարտվում պարզապես «տեղեկացնելով» հանրությանը, այն շարունակվում է՝ ուղղորդելով հանրային վարքագիծը (որոշումների ընդունում, հսկողություն, համապատասխանություն) դեպի ինստիտուտի գործունեության ընդունումն ու լեգիտիմացումը [3]:

Ինչպես արդարադատության համակարգի բոլոր օղակներում՝ դատափորձագիտության բնագավառում նույնպես տեղեկատվության ազատության և պրոակտիվ թափանցիկության սկզբունքի պահպանումն ունի առանցքային նշանակություն ոլորտի, առավելապես՝ փորձագետի նկատմամբ վստահության ամրապնդման տեսանկյունից: Հայաստանի ամենախոշոր դատափորձագիտական հաստատությունում՝ Փորձաքննությունների ազգային բյուրոյում (այսուհետ նաև՝ Կազմակերպության) տեղեկատվության ազատության և պրոակտիվ թափանցիկության գործառույթն իրականացնում է Կազմակերպության տեղեկատվական ապահովման բաժինը: Այստեղ մասնագետները հավաքագրում, մշակում և պաշտոնական կայքում հրապարակում են Կազմակերպության գործունեության վերաբերյալ հանրամատչելի տեղեկություններ, ինչպես նաև կազմակերպում են Հայաստանում լույս տեսնող դատափորձագիտության բնագավառում միակ՝ «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես» անվանումով գիտական պարբերականի հրատարակման գործընթացը, որում ներառվում են ինչպես Փորձաքննությունների ազգային բյուրոյի գիտաշխատողների (գիտնականների, փորձագետների, առաջատար մասնագետների), այնպես էլ արտերկրի հեղինակավոր դատափորձագիտական հաստատությունների և ինստիտուտների աշխատակիցների մասնագիտական մեծ կարևորություն ու արժեք ներկայացնող գիտական հոդվածները: Փորձաքննությունների ազգային բյուրոյի պաշտոնական կայքը՝ nbe.am-ը ստեղծվել է 2012 թվականին և կատարելագործվել 2017 թվականին [4]: Կայքում զետեղված տեղեկատվությունը հնարավորություն է տալիս կողմնորոշվել՝ ինչպես քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմիններին՝ իրենց գործառույթների

իրականացման ընթացքում, այնպես էլ՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց իրենց իրավունքների պաշտպանության ընթացքում անկողմնակալ և լիարժե փորձագիտական ծառայության հնարավորություններից օգտվելու հարցերում: Հաշվի առնելով տեղեկատվական տեխնոլոգիաների լայն տարածումը, ինչպես նաև սոցիալական հարթակների աճող դերակատարումը՝ Փորձաքննությունների ազգային բյուրոյի գործունեությունը ներկայացված է նաև այդ հարթակներում (Facebook, Telegram)՝ այդպիսով իրականացնելով պրոակտիվ հաղորդակցություն և ապահովելով ուղղակի կապ թիրախային լսարանի հետ: Կազմակերպության գործունեության վերաբերյալ արժանահավատ և ճշգրիտ տվյալներ հրապարակելու նպատակով Տեղեկատվական ապահովման բաժինն ակտիվորեն համագործակցում է նաև Հայաստանում և արտերկրում մեծ ազդեցություն և հեղինակություն ունեցող ինչպես պետական, այնպես էլ մասնավոր լրատվամիջոցների հետ:

Կիրառելով պաշտոնական կայքի, սոցիալական հարթակների և ՁԼՄ-ների հաղորդակցային հնարավորությունները՝ իրականացվում է պարբերական տեղեկատվական նյութերի հրապարակում, որոնք, լինելով պրոակտիվ հաղորդակցության գործիք, միաժամանակ միտված են նվազեցնելու դատափորձագիտական ոլորտի վերաբերյալ հանրային ոչ ճիշտ պատկերացումները, այդ թվում՝ *CSI (*Crime Scene Investigation անվանումով հեռուստասերիալի հապավումն է) *էֆեկտը, ինչպես նաև* բարձրացնելու ոլորտի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը: CSI էֆեկտը հանրային ընկալման և ակնկալիքների այն աղավաղումն է, որը պայմանավորված է զանգվածային մշակույթի չափազանցված և ոչ իրատեսական պատկերներով: Դեռևս 2000-ականների սկզբին իրավապահները և դատախազները սկսեցին նկատել, որ ատենակալները դատարանում անիրատեսական ակնկալիքներ ունեն փորձագետներից: Նրանք պահանջում էին, որ յուրաքանչյուր մեղադրանք ապացուցված լինի բարձր տեխնոլոգիական փորձաքննությամբ (օրինակ՝ լաբորատոր վերլուծությամբ, ԴՆԹ-ով)՝ հետին պլան մղելով ավանդական ապացույցներիը (փորձագետների և այլ վկաների ցուցմունքներ, դեպքի վայրի զննության արձանագրություններ և այլն): Այսպիսով, իրավական համակարգում ու լրատվամիջոցների կողմից սկսվեց կիրառվել CSI էֆեկտ տերմինը՝ նկարագրելու այս հակումը՝ ուղղակիորեն կապելով այն սերիալի ազդեցության հետ: CSI էֆեկտը, ուղղակիորեն ազդելով քրեական արդարադատության համակարգի վրա, դրսևորվում է երկու հիմնական ձևով.

1. Անիրատեսական ակնկալիքներ մեղադրող կողմից. դատավարության ընթացքում ակնկալվում է, որ ցանկացած քրեական գործում պետք է առկա լինեն բարձր տեխնոլոգիական, անսխալական փորձագիտական ապացույցներ (օրինակ՝ ԴՆԹ կամ մանրակրկիտ մատնահետքեր): Նման ապացույցների բացակայության դեպքում նրանք կարող են կասկածի տակ դնել ամբողջ մեղադրանքը՝ նույնիսկ այն դեպքերում, երբ բավարար են այլ տեսակի ապացույցները (վկաների ցուցմունքներ և այլն):

2. Անսխալականության միֆ. հանրային ընկալմամբ հաճախ սխալմամբ ենթադրվում է, որ դատական փորձաքննության կիրառական մեթոդաբանությունը բացարձակապես անսխալ է, իսկ փորձագետի եզրակացությունը տրամադրվում են անհավանական

արագությամբ: Սա կարող է հանգեցնել նրան, որ հնարավոր է փորձագետի եզրակացությանը տրվի չափազանց մեծ կշիռ՝ անտեսելով վերջինիս իրական սահմանափակվածությունը և թույլ տրված սխալների էականությունը [5]:

Ստացվում է, որ CSI էֆեկտն ունի ինչպես հոգեբանական, այնպես էլ իրավական ազդեցություն և կարող է ազդել ինչպես դատավարության, այնպես էլ վարույթի հանրային և մասնավոր մասնակիցների վրա: Օրինակ, երբ մեդիա ազդեցության ներքո և հանրային անիրական ակնկալիքները բավարարելու համար քննիչը ստիպված է լինում նշանակել անհարկի կամ թանկ արժեք ունեցող փորձաքննություն:

Հաշվի առնելով CSI էֆեկտի անուղղակի ազդեցությունը վարույթի մասնակիցների, մասնավորապես՝ մեղադրյալների կամ տուժողների, ինչպես նաև հանրային կարծիքի վրա՝ նպատակահարմար է խնդիրը ներկայացնել Հայաստանյան դատական պրակտիկայից բերված կոնկրետ օրինակների կամ դեպքերի ուսումնասիրության միջոցով: Այսպես, 2025 թվականին ընթացող աղմկահարույց քրեական վարույթներից մեկի դատաքննության ընթացքում տուժողները որպես դատակոչված վկա փորձագետի հարցաքննության ժամանակ, վերջինիս կողմից չստանալով ցանկալի պատասխաններ, անհարգալից վերաբերմունք են ցուցաբերում վարույթով չշահագրգռված անձի՝ փորձագետի նկատմամբ, տարակուսանք հայտնելով, թե ինչպե՞ս կարող է փորձագետը չտիրապետել այս կամ այն տվյալին և սահմանափակվել իր փորձագետի եզրակացությամբտրված ապացուցողական ելակետային տվյալների հիմնավորվածությունը հաստատելով: Տուժողներից մեկն անգամ վրդովված խոստովանել էր, թե զուր էր փորձագետի եզրակացությանը այդքան (մի քանի նիստ) սպասել՝ «նոր բան իմանալու ակնկալիքով»: Այս իրավիճակը հնարավոր է դիտարկել ինչպես CSI էֆեկտի ազդեցության, այնպես էլ փորձագետի նկատմամբ վստահության պակասի տեսանկյունից:

Հարկ է ընդունել նաև, որ վստահության ամրապնդման համար կարևոր նախապայման է համարվում այսպես կոչված «թափանցիկությունը»: Նիդերլանդների Ուտրեխտի Համալսարանի պրոֆեսոր Ստեֆան Գրիմմելիխույսեն գիտականորեն հիմնավորել է այն տեսակետը, որ թափանցիկության դրական ազդեցությունը հանրային վստահության վրա կրում է պայմանական բնույթ [6]: Մասնավորապես, եթե ինստիտուցիոնալ վստահության նախնական մակարդակը բարձր է, ապա պրոակտիվ տեղեկատվության տրամադրումը կարող է ունենալ նվազագույն ազդեցություն՝ քանի որ այն ընկալվում է որպես սովորական գործելակերպ: Այս համատեքստում, թափանցիկությունն առավել արդյունավետ է ծառայում որպես վստահությունը կառուցող կամ վերականգնող գործիք ցածր վստահության միջավայրում:

Թափանցիկությունը (գործողությունների, մեթոդների, որոշումների բացահայտումը) համարվում է վստահություն կառուցելու հիմնական մեխանիզմ, իսկ նախապայմաններն են.

- Հաշվետվողականությունը. բացահայտ տեղեկատվությունը թույլ է տալիս հանրությանը կամ վերահսկող պետական համապատասխան մարմիններին ստուգել հաստատության (ինստիտուտի) աշխատանքը: Երբ մարմինը պատրաստ է ցույց տալ իր գործունեության

ներքին գործընթացները, դա ենթադրում է արդեն բարեխղճություն և զգալիորեն բարձրացնում վստահության մակարդակը:

- Ռիսկի նվազեցումը. եթե փորձագետը կամ հաստատությունը (ինստիտուտը) թաքցնում է իր մեթոդաբանության սահմանափակումները կամ թույլ տրված սխալի էականությունը, հանրային վստահությունը զրոյանում է: Հետևաբար, թափանցիկությունը գործում է որպես «կանխարգելիչ միջոց»՝ ապացուցելով, որ իրականում թաքցնելու որևէ նախապայման չկա:

Ըստ պրոֆեսոր Գրիմմելիխույսենի, վերոնշյալ փոխկապակցվածությունն ունի նաև հակադարձ ուղղությունը. թափանցիկության ազդեցությունը կախված է նախնական վստահությունից, նախապայմաններն են.

- Բարձր վստահության պարագայում. երբ վստահությունն արդեն իսկ բարձր է, թափանցիկության լրացուցիչ չափաբաժինները կարող են ունենալ նվազագույն ազդեցություն, քանի որ հանրությունն արդեն հավատում է հաստատության (ինստիտուտի) բարեվարքությանը:
- Ցածր վստահության պարագայում. երբ վստահությունը ցածր է, օրինակ՝ դատական փորձաքննության ոլորտում առկա խնդիրների մասին հրապարակային լուրերից հետո, թափանցիկությունը դառնում է կենսական գործիք՝ ապացուցելու համար, որ հաստատությունը բարեփոխվել է և գործում է նոր ստանդարտներով:

Դատական փորձագետների նկատմամբ վստահության կարևոր հիմնասյուներից են էթիկան և անկողմնակալությունը, որոնք ամրագրված են Դատափորձագիտական ինստիտուտների եվրոպական ցանցի (ENFSI) կողմից Վարքագծի կանոնագիրքում (Code of Conduct): Վերջինս համարվում է հիմնարար փաստաթուղթ, որը սահմանում է պարտադիր նորմեր բոլոր անդամ հաստատությունների փորձագետների համար [7]: Այս նորմերն ուղղված են ոչ միայն էթիկական բարեվարքությանը, այլև մասնագիտական գործունեության վրա ցանկացած կողմնակալ ազդեցության բացառմանը:

ENFSI էթիկական նորմերի առանցքը համարվում է բացարձակ անկողմնակալություն (Impartiality): Փորձագետը պարտավոր է պահպանել.

- Անկախությունը անկախ գործի ելքից. աշխատել անկախ այն բանից, թե որ կողմն է պատվիրել փորձաքննությունը (մեղադրանքի, պաշտպանության կամ դատարանի կողմից), և որևէ շահագրգռվածություն չունենալ գործի վերջնական ելքի նկատմամբ:
- Անաչառությունը. պահպանելովով օբյեկտիվությունը՝ հավաքել և մեկնաբանել ապացույցները: Ցանկացած անաչառ դիտորդ պետք է համոզվի, որ փորձագետի ապացուցողական հիմնավորումները չեն կրել արտաքին ճնշման կամ նախնական տեղեկատվության ազդեցություն:
- Կողմնակալության կանխարգելումը. զերծ մնալ ճանաչողական կամ կառուցվածքային կողմնակալությունից, որը կարող է աղավաղել եզրակացության գիտականորեն հիմնավորումները:

ENFSI-ի Վարքագծի կանոնագիրքը ֆունկցիոնալ գործիք է. այն ոչ միայն սահմանում է փորձագետի անձնական բարեվարքության չափանիշները այլև պահպանում է

դատափորձագիտական հաստատության (ինստիտուտի) հուսալիությունը քրեական արդարադատության համակարգի և հանրության աչքում: Այս նորմերի պրոակտիվ ներկայացումը հանրությանը ուղղորդում է վստահությունը կառուցել ոչ թե հեռուստատեսային կերպարների, այլ էթիկական և գիտական ստանդարտների վրա: Դատափորձագիտական բնագավառի և հատկապես փորձագետի նկատմամբ հանրային վստահության ապահովումը և դրա հետ փոխկապակցված թափանցիկության մեխանիզմների ներդրումը պետք է իրականացվի՝ պահպանելով գործող օրենսդրության պահանջները՝ քննության գաղտնիքի և անձնական տվյալների պաշտպանության իրավական անհրաժեշտությունը չխախտելու համար, ինչը ցանկացած ժողովրդավարական հասարակությունում արդար քննության հիմնարար երաշխիքն է:

Նոր Հարավային Ուելսի Համալսարանի իրավունքի պրոֆեսոր Գերի Էդմոնդն այս հարցի վերաբերյալ նշում է հետևյալը. «Դատական փորձագիտական հաստատությունների հաշվետվողականությունը և կիրառված մեթոդաբանության բացահայտումը կենսականորեն կարևոր են հանրային վստահության պահպանման համար, սակայն այդ պարտավորությունը պետք է միշտ իրականացվի դատավարության կարգապահության և անձնական տվյալների պաշտպանության պարտադիր իրավական սահմանափակումների շրջանակներում: Ոչ մի թափանցիկություն չի կարող արդարացնել քրեական դատավարության գաղտնիության և մասնավորության իրավական երաշխիքների խախտումը» [8]:

Դատափորձագիտական հաստատություններն, օժանդակելով մեր երկրում հանցավորության դեմ պայքարին, հանցագործությունների բացահայտմանը և արդարադատության արդյունավետ իրականացմանը, տիրապետում են այնպիսի տվյալների, որոնց գաղտնիության և ամբողջականության ապահովումը կենսական նշանակություն ունեն ինչպես անձանց իրավունքների, այնպես էլ պետության շահերի պաշտպանության տեսանկյունից: Փորձաքննությունների արդյունքում ստեղծվում, մշակվում և վերլուծվում են այնպիսի զգայուն տվյալներ, ինչպիսիք են դատաբժշկական եզրակացությամբ հաստատված անձի մահվան պատճառը և հանգամանքները, անհատականացված ԴՆԹ բնութագիրը, հոգեբանական և հոգեբուժական փորձաքննությունների արդյունքում ձևավորված անձնական բնութագիրը, ռազմական տեխնիկայի, զենքի կամ պաշտպանական համակարգերի տակտիկատեխնիկական բնութագրերը, թվային տվյալները և այլն: Նմանօրինակ զգայուն տվյալների հետ աշխատանքի պատշաճ կազմակերպման համար փորձագիտական հաստատություններում ներդրված են անվտանգության հատուկ ռեժիմներ և տվյալների բազաների պաշտպանության մեխանիզմներ:

Հարկ է նշել նաև, որ գաղտնիության պահպանման պարտավորությունը դատաքննչական մարմինների, ինչպես նաև փորձագետների համար կրում է երկակի բնույթ՝ լինելով միաժամանակ և՛ իրավական պահանջ (ամրագրված օրենսդրությամբ և դրա խախտումը ենթադրում է պատասխանատվություն), և՛ մասնագիտական-էթիկական սկզբունք (արտացոլող անկախությունը, անաչառությունն ու մասնագիտական վստահությունը): Միայն այս երկու մակարդակների համակցված ապահովման դեպքում է

հնարավոր հասնել զգայուն տվյալների արդյունավետ պաշտպանությանը: Մասնավորապես, վարույթում ներգրավված անձանց (դատավոր, վարույթի հանրային մասնակից, վարույթի մասնավոր մասնակից, վարույթին օժանդակող անձ (փորձագետ, փաստաբան), ձերբակալված անձ և այլն) կողմից գաղտնիության պահպանման սկզբունքը (պետական, մասնավոր և ընտանեկան կյանքի, բանկային և օրենքով նախատեսված այլ գաղտնիքի պահպանումը) ամրագրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Մասնավորապես, նշված օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարույթն իրականացնող մարմնի պահանջով վարութային գործողությունների մասնակիցները պարտավոր են չհրապարակել որոշակի տեղեկություններ, որի համար նրանցից վերցվում է ստորագրություն: Իսկ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ վարութային գործողությունների մասնակիցները պարտավոր են առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված ապացուցողական կամ վարութային այլ գործողության, ինչպես նաև դռնփակ դատական նիստի ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները:

Արդարադատության բնագավառում գաղտնիության արդյունավետ պահպանումը պահանջում է, որպեսզի իրավական նորմերին զուգահեռ, համակարգի բոլոր մասնակիցները (դատավորներ, դատախազներ, քննիչներ) կիրառեն ներքին, մասնագիտական էթիկայի կանոնակարգեր, որոնք մանրամասնում և ամրապնդում են գաղտնիքի պահպանման պարտավորությունը՝ ապահովելով մասնագիտական գործունեության ամենաբարձր ստանդարտ: Նման կանոնակարգի մշակումն ու կիրառումը կարևոր է նաև վարույթին օժանդակող անձանց՝ փորձագետների համար: Սակայն պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում դեռևս առկա չէ փորձագիտական գործունեության մասին օրենք, որի կարգավորումների պայմաններում փորձաքննությունների իրականացման հետ կապված իրավահարաբերությունները, այդ թվում՝ փորձաքննության անցկացման կապակցությամբ փորձագետի տրամադրության տակ առկա տեղեկատվության տնօրինման (հրապարակման և/կամ չհրապարակման) հետ կապված հարցերն ամբողջական և համապարփակ կարգավորում կստանային:

Քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված գաղտնիքի չհրապարակման ընդհանուր և անորոշ սահմանումը, հատկապես՝ փորձագետի համար, ստեղծում է «ինքնագրաքննության» (self-censorship) մթնոլորտ, ինչը կաշկանդում է նրան մասնակցելու հանրային քննարկումներին կամ տրամադրել մասնագիտական կարծիք, պարզաբանումներ (հարցազրույցներ, մամուլի ասուլիսներ) նույնիսկ այն դեպքերում, երբ տրամադրված տվյալներն ակնհայտորեն չեն վնասում գործի քննությանը և սահմանափակված չեն նախաքննական գաղտնիքով: Շատ փորձագետներ էլ խուսափում են հարցազրույցներ տալուց կամ սոցիալական ցանցի էջերում լուսանկարներ հրապարակելուց՝ հաշվի առնելով անձնական անվտանգության դեմ հնարավոր սպառնալիքների, ինչպես նաև մասնագիտական անկախության վրա հնարավոր ճնշումների ռիսկը: Այս իրավիճակն իր հերթին խաթարում է վերը արծարծված թափանցիկության և հանրային հաղորդակցության

սկզբունքները:

Ամփոփելով և վերլուծելով առկա խնդիրները, կարելի է եզրակացնել, որ գաղտնիության պաշտպանությունը չպետք է լինի բացարձակ արգելք հանրային հաղորդակցության համար: Բարեփոխումների նպատակը պետք է լինի հանրային վստահության, թափանցիկության և գաղտնիության միջև իրավական հավասարակշռության սահմանումը: Այս նպատակին հասնալու համար առաջարկվում է.

- Իրավական նորմերով հստակեցնել և ամրագրել այն տեղեկատվության տեսակների սպառիչ ցանկը (գաղտնիության սահմանը), որի հրապարակումը դատական փորձագետի կողմից անթույլատրելի է :
- Ստեղծել կամ լրացումներ կատարել դատական փորձագետի մասնագիտական էթիկայի կանոնակարգերում, ինչը կծառայի ոչ միայն որպես կարգապահական վերահսկողության ներքին գործիքակազմ, այլև կհստակեցնի գաղտնիության պահպանման մասնագիտական սահմանները, հատկապես՝ թվային տվյալների և հանրային հաղորդակցության ոլորտում:
- Մշակել դատական փորձագետների տեղեկատվության կառավարման (Data Integrity) մասնագիտական ուղեցույց, որում նշված կլինի, թե ինչպե՞ս պետք է փորձագետը ներկայացնի իր տվյալները և պահպանի մասնագիտական էթիկան մեդիայի հետ հաղորդակցվելիս, ինչպես նաև, թե ո՞ր դեպքերում պետք է պահպահել անանունության սկզբունքը կամ խուսափել ԶԼՄ-ներում իր մասնակցությամբ ձայնային կամ տեսաձայնագրային բովանդակության մշակումից և տարածումից:

Գրականության ցանկ

1. https://opendatacharter.org/principles/
2. Wirtz, B. W., Weyer, M., & Morlock, M. J. (2022). *Open government data: A systematic literature review of empirical research*. International Journal of Information Management, 63, 102451.
3. Grimmelikhuijsen, S., et al. (2013). Transparency actually: how transparency affects public perceptions of political decision-making. *European Political Science Review*, 5(4), 561–578. DOI: $10.1017/S175577391300007X$.
4. http://nbe.am/.
5. Maeder, E. M., & Pica, L. C. (2018). The CSI effect: The influence of forensic science in the courtroom. *Psychology, Public Policy, and Law*, 24(2), 253–268.
6. Grimmelikhuijsen, S., et al. (2013). Transparency actually: how transparency affects public perceptions of political decision-making. *European Political Science Review*, 5(4), 561–578. DOI: $10.1017/S175577391300007X$.
7. European Network of Forensic Science Institutes (ENFSI) **https://enfsi.eu/**
8. Edmond, G., & Thompson, W. C. (2017). Identifying and managing the risks associated with forensic science. *Law, Probability and Risk*, 16(1), 1–25. DOI: $10.1093/lpr/mgw004$.

ЗНАЧЕНИЕ ОБЕСПЕЧЕНИЯ ИНФОРМАЦИИ В СФЕРЕ СУДЕБНЫХ ЭКСПЕРТИЗ: ПРОБЛЕМА БАЛАНСА ОБЩЕСТВЕННОГО ДОВЕРИЯ, ПРОЗРАЧНОСТИ И КОНФИДЕНЦИАЛЬНОСТИ

Мелконян Т. В., Мосикян А. Т.

Известно, что в сфере судебной экспертизы доверие к судебному эксперту обусловлено обоснованностью представленных экспертных заключений, высоким уровнем профессиональных качеств, способностью правильного и целенаправленного применения специальных знаний, независимостью и беспристрастностью. Не менее важно также обеспечение прозрачности деятельности эксперта и эффективных механизмов публичной коммуникации, которые необходимы для укрепления принципа подотчётности, обоснованности доказательных данных и повышения уровня доверия.

В статье рассматривается необходимость обеспечения информации и прозрачности в сфере судебной экспертизы как важного элемента общественного доверия к данной области и судебному эксперту. Одновременно анализируется обязательное требование сохранения конфиденциальности информации в экспертной сфере, обозначая ту тонкую грань, где освещение не должно наносить ущерб расследованию процесса. В статье предлагаются допустимые механизмы обеспечения информации, которые способствуют эффективной коммуникации между экспертами, юридическим сообществом, а также заинтересованными лицами, проявляющими интерес к данной области.

Ключевые слова: *сфера судебной экспертизы, свобода информации, прозрачность, подотчётность, общественное доверие, конфиденциальность, оценка доказательств, коммуникация, данные открытого управления, эффект CSI.*

THE IMPORTANCE OF INFORMATION PROVISION IN THE FIELD OF FORENSIC EXPERTISE: THE CHALLENGE OF BALANCING PUBLIC TRUST, TRANSPARENCY AND CONFIDENTIALITY

Melkonyan T., Mosikyan A.

This article examines the importance of ensuring access to information in the field of forensic expertise as a key factor in strengthening public trust in forensic institutions and experts. Trust in forensic expertise is determined not only by the scientific validity and substantiation of expert conclusions, professional competence, independence, and impartiality, but also by the level of transparency in expert activities and the effectiveness of public communication mechanisms. The article analyzes the necessity of transparency in forensic practice alongside the mandatory requirement to preserve the confidentiality of information, emphasizing the delicate balance

between openness and the need to avoid interference with investigative and judicial proceedings. Particular attention is given to defining the permissible boundaries of information disclosure, where public communication must not undermine the integrity of the examination process or the evaluation of evidence. The study proposes acceptable mechanisms for information provision that promote effective communication between forensic experts, the legal community, and other interested stakeholders, while maintaining procedural confidentiality. Additionally, the impact of the CSI effect on public perception and expectations regarding forensic evidence is addressed. The findings underscore the significance of a balanced information policy in enhancing accountability, evidentiary reliability, transparency, and sustained public confidence in the forensic examination system.

Keywords: *forensic expertise, freedom of information, transparency, accountability, public trust, confidentiality, evaluation of evidence, communication, open government data, CSI effect.*

Ներկայացվել է խմբագրության 21.08.2025
Ընդունվել է տպագրության 15.09.2025